ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ՈՒՂԵՐՁԸ

30.12.2013 14:31

Հարգելի հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան կապակցությամբ: Յուրաքանչյուր հայի ընտանիքում Ամանորը կապում են նոր ձեռքբերումների ու նվաճումների հետ՝ հույսով, որ գալիք տարին իր հետ կբերի նոր հաջողություններ:

Նոր տարին բոլորի համար ավանդաբար համարվում է անցած տարին ամփոփելու և նոր տարում անելիքների մասին խորհելու կարճ ժամանակաշրջան, որին հաջորդում է գործնական աշխատանքը՝ նպատակներին հասնելու համար:

Մենք՝ փաստաբաններս, եկող՝ 2014 թվականին, նույնպես ունենք անելիքներ կապված Հայաստանում արդարադատության կայացման և զարգացման հետ և նպատակադրված ենք միայն աշխատանքով բարձրացնելու փաստաբանի ոչ միայն մասնագիտական առաքելությունը, այլ նաև կոչումը, քանի որ հենց փաստաբանի արդյունավետ աշխատանքից է կախված հազարավոր մարդկանց ճակատագրեր:
Մեկ անգամ ևս շնորհավորում եմ հայրենակիցներիս Ամանորի և Սուրբ ծնունդի կապակցությամբ՝ մաղթում առողջություն, հաջողություններ և ջերմություն բոլորիս ընտանիքներին:

Նախորդ նորությունը: ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀՐԱՎԵՐՔ

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

23.10.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

18.10.2013ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013Թ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })